



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ



1901 ք. Ստեփանավան, Սոս Սարգսյան 1
Էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am
վեբ կայք՝ www.stepanavan.am



(374-256) - 22-233
ֆաքս - 22-233

№ «387» 27 հունիսի 2019թ.

ՀՀ Լոռու մարզպետ պարոն
Անդրեյ Ղուկասյանին

Հարգելի պարոն Ղուկասյան

Ստեփանավանի համայնքային աղբավայրը շահագործվում է դեռևս անցած դարի 50-ական թվականներից մինչև օրս, այն միակ արտոնագրված աղբավայրն է տարածաշրջանում, որի հողհատկացումն իրականացվել է Սովմինի որոշմամբ (որոշման փաստաթղթերը պահպանված չեն): Աղբավայրի տարածք է ընտրվել և հատկացվել Չորագետի կիրճում առկա 2.25 հա հարթ ժայռային ցածրավայրը, որը գտնվում է գետից 120-150 մետր և մոտակա բնակելի տներից 800 մետր հեռավորության վրա:

Համայնքապետարանը բնապահպանության նախարարության պահանջով վարում է թափոնների հեռացման վայրի ռեեստրային թերթիկ ՀՀ կառավարության N 1180-Ն որոշման կարգի համաձայն, վճարում տարեկան բնապահպանական վճարներ:

Աղբավայրի շահագործումը և պահպանումը իրագործվում է համայնքապետարանի և մրցույթում շահած աղբահանություն և սան մաքրում իրականացնող կազմակերպության հետ համատեղ, հնարավորինս ապահովում է աղբավայրին հատուկ պահանջվող սանիտարական նորմերը, կուտակված աղբը պարբերաբար մշակվում և ծածկվում է հողաշերտով, աղբավայրի վերկիրճյա տարածքը մաքրվում է, վերանորոգվում է մոտեցման ճանապարհը, առկա է պահակային ծառայություն:

Համայնքապետարանը 2011 թվականից, որպես մտահոգ և շահագրգիռ կողմ, ակտիվ մասնակցել է «Թափոնների կառավարում-ԵՀԳԳ Արևելք» տարածաշրջանային ծրագրով թափոնների կառավարման ռազմավարության տարբերակների մշակմանը Լոռու մարզում, որի նպատակային հենքը՝ նոր միասնական աղբավայրի գաղափարն է Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանների համար:

Նոր աղբավայրի հողատարածքի հատկացման, աղբավայրին առանձնահատուկ միջոցառումների և շինությունների իրականացման համար անհրաժեշտ են մասնագիտական, երկրաբանական հետազոտություններ և ֆինանսական մեծ ծավալի ներդրումներ, որը հնարավոր կլինի իրականացնել միմիայն կառավարության աջակցության շնորհիվ:

Բնապահպանական և սանիտարական նորմերին համապատասխանող նոր աղբավայրը այլևս պահանջված անհրաժեշտություն է, որը զերծ կպահի Ձորագետի կիրճը աղբաթափումից, քանի որ այն համարվում է զրոսաշրջային գոտի իր յուրահատուկ էքստրեմալ տուրիստական անցուղիներով:

Առդիր՝ մեկ նկար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ